ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2020թ.

«Հայկական ժամանակ» թերթի
լրագրող Աղունիկ Հովհաննիսյանին
E-mail: ms.aghun.armeni@gmail.com

Ի պատասխան Ձեր 27.07.2020թ. հարցմանը

Հարգելի տիկին Հովհաննիսյան

Տեղեկացնում եմ, որ Լոռու մարզում շինարարական աշխատանքներում ներգրավվելու համար Լոռու մարզպետարան դիմել է կորոնավիրուսի համավարակի պատճառով արտագնա աշխատանքի չմեկնած 1496 քաղաքացի: Նրանց տվյալները մարզպետի պաշտոնական գրությամբ տրամադրվել են մարզի համայնքների ղեկավարներին և շինարարական կազմակերպություններին՝ կապիտալ շինաշխատանքներում, սուբվենցիոն, ինչպես նաև այլ ֆինանսական միջոցներով իրականացվող աշխատանքներում ներգրավելու համար: Այդ ցանկը թարմացվում է երկշաբաթյա պարբերականությամբ:

Մարզպետարանի կողմից նաև պարբերաբար մոնիտորինգ է իրականացվում՝ տեղեկանալու, թե նրանցից քանիսն են տեղավորվել աշխատանքի:

31.08.2020թ. դրությամբ մարզում շինաշխատանքներ իրականացնող (այդ թվում սուբվենիցոն ծրագրերով) թվով 10 շինարարական կազմակերպություններում նրանցից աշխատանքի է անցել 150 քաղաքացի: Շուրջ 60 քաղաքացու ևս շինկազմակերպությունների կողմից աշխատանք է առաջարկվել, սակայն պայմանները չբավարարելու հիմքով (աշխատանքի բնույթը, բնակավայրը) նրանք հրաժարվել են:

Հարկ եմ համարում տեղեկացնել նաև, որ մարզում այս տարի սուբվենցիոն միջոցներով իրականացվելիք 98 ծրագրերից (ընդհանուր արժեքը 4.7 մլրդ դրամ) շինարարական աշխատանքներ ենթադրող շուրջ 60-ի մեկնարկը դեռևս տրված չէ, հետևաբար մեկնարկի դեպքում աշխատանքներում ներգրավվելու լրացուցիչ հնարավորություն կստեղծվի:

Մարզում, կապիտալ շինարարության ոլորտում իրականացվում են քաղաքաշինական և ճանապարհաշինարարական աշխատանքներ 17.8մլրդ դրամ արժեքով:

ՀՀ պետական բյուջեով, ՀՏՋՀ (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ) և հրատապ ծրագրերով իրականացվում են 1.97մլրդ դրամի աշխատանքներ:

կատ. Վ.Ղարսայան
հեռ. /0322/ 2-35-99

Արտագնա աշխատանքի չմեկնածները հիմնականում ներգրավվել են ճանապարհաշինական և քաղաքաշինական տարաբնույթ աշխատանքներում:

Նրանց աշխատավարձի չափը մինչև 250 հազար դրամ է:

Արտագնա աշխատանքի չմեկնած քաղաքացիների զբաղվածության խնդիրը գտնվում է մեր անմիջական հսկողության ներքո:

8/4/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝ **Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

կատ. Վ.Ղարսայան
հեռ. /0322/ 2-35-99